Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 10

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան 01 հուլիսի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15–ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ, «Արմենիկումի և DFMO-ի (դիֆլուորոմեթիլ օրնիտին) համակցված կիրառումը պապիլոմաների բուժման ժամանակ» վերնագրով թեկնածուական ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ, «Արմենիկումի և DFMO-ի (դիֆլուորոմեթիլ օրնիտին) համակցված կիրառումը պապիլոմաների բուժման ժամանակ» վերնագրով թեկնածուական ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

Լսեցին՝ Հովհաննես Վաչագանի Ղազարյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսության շրջանակներում կատարված աշխատանքները, ստացված արդյունքները և պատասխանեց ներկաների հարցերին:

Եղույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտքարտուղար Ա. Դադայանը, ով հաղորդեց, որ ատենախոսության վերաբերյալ կարծիք կազմելու համար այն տրվել է Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանին և Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Խ. Հակոբյանին: Ա. Դադայանը ձայնը տվեց նրանց, ատենախոսության վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ներկայացման համար:

Ա. Հովհաննիսյանը կարևորեց այն հանգամանքը, որ վերջին տարիներին ինֆեկցիոն վերքերի բուժման համար կիրառվում են այնպիսի մոտեցումներ, որոնք հիմնված են ներբակտերիալ և ներսնկային պոլիամինային կախյալ մետաբոլիզմի վրա: Այդ առումով արդիական է «Արմենիկումի և դիֆլուորոմեթիլ օրնիտին» համակցված քսուքի կիրառման հնարավորությունը՝ վերքերի բորբոքային պրոցեսի բուժման համար: Ատենախոսության իրականացման ընթացքում օգտագործված մեթոդները և ստացված արդյունքները կասկած չեն հարուցում, կատարվել է մեծ ծավալի արժեքավոր աշխատանք:

Վերը նշվածի հետ մեկտեղ աշխատանքում տեղ են գտել նաև որոշ բացթողումներ և թերություններ, որոնց շտկումն էլ ավելի կբարձրացնի ատենախոսության արժեքը.

1. Լավ կլիներ, եթե աշխատանքում առանձին էջով ներկայացվեին համառոտագրությունները:
2. Ստուգիչ և փորձնական խմբի կենդանիների հյուսվածքաբանական նկարները անհրաժեշտ է տեղադրել կողո-կողքի՝ փորձի արդյունքներն առավել ակնհայտ դարձնելու համար:
3. Աշխատանքի եզրակացությունները չունեն որոշակիություն, լավ կլիներ, եթե դրանցում ներկայացվեին համատեղ կիրառված դեղի արդյունավետության համեմատական թվեր, որն ավելի արժեքավոր կդարձներ աշխատանքը:

Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Խաչիկ Հակոբյանը կարևորեց այն հանգամանքը, որ ատենախոսական աշխատանքը վերաբերում է կիրառական բժշկության արդիական խնդիրներից մեկին՝ վերքային բորբոքային պրոցեսների վերահսկմանն ու բուժմանը՝ դեղաբանական նորարար մոտեցումներով: Աշխատանքը հատկապես արժեքավոր է նրանով, որ համադրելով փորձարարական մոդելներ, մորֆոլոգիական և բակտերիաբանական մեթոդներ, փորձ է արվում գնահատել «ԴՄՖՈ – Արմենիկում» համատեղ քսուքի տեղային ազդեցությունը: Կատարված է մեծ ծավալի հետազոտական աշխատանք, ստացված տվյալները կասկած չեն հարուցում, իսկ աշխատանքը բավարարում է ատենախոսական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության մեջ առկա են որոշ թերություններ, որոնց վերացման դեպքում զգալիորեն կբարձրանա աշխատանքի ինչպես տեսական, այնպես էլ՝ կիրառական արժեքը: Մասնավորապես.

1. Աշխատանում տերմինները ներկայացված են օտար լեզվով՝ առանց համապատասխան համարժեքների կամ բացատրությունների:
2. Ատենախոսությունում ներկայացված են վերքային գործընթացում ներգրավված բջջային տարրերի, այդ թվում՝ լեյկոցիտների մորֆոլոգիական նկարագրությունը: Առավել ամբողջական պատկերացում կազմելու համար նպատակահարմար կլիներ ներառել լեյկոցիտների քանակական վերլուծությունը, դրանց դինամիկ փոփոխությունները բուժման տարբեր փուլերում: Սա հնարավորություն կտար առավել օբյեկտիվ գնահատել տեղային բորբոքային պատասխանը և «ԴՄՖՈ – Արմենիկում» կազմի իմունոմոդուլյացնող ազդեցությունը:
3. Լավ կլիներ, եթե կատարվեին նաև ճշգրտումներ տվյալների վերլուծության և մեկնաբանության բաժնում:
4. Գրաֆիկները և լուսանկարները բավարար չեն բացատրվում տեքստում, եզրակացությունների և արդյունքների միջև չկա շեշտված կապ:

Վերոնշյալ թերությունների շտկումից հետո, աշխատանքը կարելի է ներկայացնել պաշտպանության:

Հիմք ընդունելով գրախոսների կարծիքները և ատենախոսի կողմից հնչեցված բոլոր հարցերին տրված սպառիչ պատասխանները՝ գիտխորհրդի անդամներն

առաջարկեցին հաստատել Հովհաննես Ղազարյանի ատենախոսության վերաբերյալ գիտխորհրդի եզրակացության նախագիծը:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հաստատել Հովհաննես Վաչագանի Ղազարյանի ատենախոսության վերաբերյալ եզրակացությունը:

2. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ա. Դաղայան**